

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ 1918–1920 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Մաս երրորդ: ՀՅԴ 9–րդ Ընդհանուր ժողովում ընտրված
Դատական նախաքննիչ հանձնաժողովի
արձանագրությունները*

Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում ՀՅ Դաշնակցության գործունեությունը լուսաբանող պատմական վավերագրերի կարևոր բաժինն են կազմում 1919 թ. սեպտեմբեր–հոկտեմբերին կայացած կուսակցության 9–րդ Ընդհանուր ժողովում ընտրված ՀՅԴ Դատական մարմինների աշխատանքներին վերաբերող փաստաթղթերը:

Ներկա հրապարակման մեջ ներկայացվում են ՀՅԴ 9–րդ Ընդհանուր ժողովում ստեղծված Դատական նախաքննիչ հանձնաժողովի արձանագրությունները: Այս մարմինը գործել է Ընդհանուր ժողովի բուն նիստերի ընթացքում, իսկ արդեն ժողովի ավարտից հետո նրան հաջորդել է ժողովում ընտրված և մշտական հանգամանքով գործող Գերագույն դատական ատյանը, որի 1919–1920 թթ. արձանագրությունների հրապարակումը կիրակացնենք հաջորդ համարներում:

Արժե հիշատակել, որ ՀՅԴ 9–րդ Ընդհանուր ժողովի օրակարգում դատական որևէ մարմնի ընտրության կամ կազմակերպման վերաբերյալ առանձին կետ չի նշվել¹: Փոխարենը՝ 10–րդ Ընդհանուր ժողովի օրակարգում, որը նախատեսվում էր գումարել 1920 թ. սեպտեմբերի 20–ին, «Զեկուցում և հաշվետվություն» բաժնի 5–րդ կետում նշված էր. «Գերագույն Դատական Ատեան»²:

9–րդ Ընդհանուր ժողովում ընդունված «Կազմակերպական կանոններ»–

* Ընդունվել է տպագրության 12.05.2013 թ.: «ՎԷՄ»-ի նախորդ համարում՝ «ՀՅ Դաշնակցության 1918–1920 թթ. պատմության վավերագրերը» հրապարակման երկրորդ մասում, թիվ 9 փաստաթղթի տողատակի 76–րդ ծանոթագրության մեջ Սաֆրաստեան Արամ–ի փոխարեն սխալմամբ տրվել են Արշակ Սաֆրաստյանի տվյալները, ինչի համար հայցում ենք ընթերցողների ներողամտությունը: Զիշտը՝ **Սաֆրաստյան Արամ Խաչատուրի (1888, Վան–1966, Երևան) – հայտնի թուրքագետ: Խմբ.:**

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 136, թ. 1–հակ.:

2 ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 177:

ի³ համաձայն՝ Գերագույն դատական ատյանը մնայուն մարմին էր և բաղկացած էր երեք անդամից ու երեք փոխանդամից: Այն իրավասու էր քննելու կուսակցության բոլոր անդամների ու մարմինների (ներառյալ՝ Բյուրոն), ՀՀ Խորհրդարանի դաշնակցական խմբակցության և կառավարության անդամների դրամական, քրեական և հակակարգապահական գործերը և ուներ համապատասխան վճիռների կայացման, ընդհուպ կուսակցությունից արտաքսման լիազորություններ: Նրա դատական վճիռները փոխանցվում էին Բյուրոյին՝ ի գիտություն և գործադրություն: Մյուս կողմից, այս մարմնի անդամների անաչառությունն ապահովելու նպատակով վերջիններս խորհրդարանական խմբակցությունից զատ չէին կարող անդամակցել կուսակցական-կազմակերպական որևէ այլ մարմնի (բացառությամբ Ընդհանուր ժողովների պատգամավոր ընտրվելուց): Ինչ խոսք, վերջին պարագան նրանց լրացուցիչ հեղինակություն պետք է հաղորդեր:

Ընդհանուր ժողովում Դատական նախաքննիչ հանձնաժողովի անդամ ընտրվեց հինգ հոգի՝ Հովակիմ Բուդաղյան, Մինաս Մակարյան, Գրիգոր Մերջանով, Շահան Նաթալի (Հ. Տեր-Հակոբյան) և Մինաս Վերածին (Գասապյան): Այս կազմից ընտրվեց հանձնաժողովի դիվան – նախագահ՝ Շ. Նաթալի, քարտուղար՝ Մ. Վերածին: Հ. Բուդաղյանի հրաժարականից հետո Ընդհանուր ժողովը նրա փոխարեն անդամ ընտրեց Հայկ Խաչատուրյանին, ում հետո փոխարինեց Համբարձում Տերտերյանը: Հարկ է նշել, որ 1919 թ. հոկտեմբերի 3-30-ին կայացած հանձնաժողովի 13 նիստերին հիմնականում մասնակցել են երեք հոգի՝ Շ. Նաթալին, Գ. Մերջանովը և Մ. Վերածինը, իսկ մյուսները զբաղվածության կամ գործողումների պատճառով պարբերաբար բացակայել են:

Հանձնաժողովը զբաղվեց տարբեր անձանց հարցաքննությամբ, համապատասխան բացատրություններ ստանալու պահանջով դիմեց ՀՅԴ կուսակցական (ընդհուպ՝ Բյուրոները) և ՀՀ կառավարական բարձրագույն մարմիններին:

Դատական որոշ գործերի վերաբերյալ վերջնական զեկուցում կազմելու նպատակով հատուկ հանձնարարություններ տրվեցին նաև հանձնաժողովի անդամներին: Որոշ հարցեր հանձնաժողովն իր իրավասությունից դուրս համարելով՝ դրանց լուծումը փոխանցեց Ընդհանուր ժողովին, Բյուրոյին, ընտրվելիք նոր Գերագույն դատական ատյանին՝ զուգահեռաբար ներկայացնելով որոշակի առաջարկներ:

Վերջին նիստում հանձնաժողովը Ընդհանուր ժողովին և ընտրվելիք Գերագույն դատական ատյանին ներկայացնելու համար դասավորել էր 38 գործ: Ընդհանուր ժողովի աշխատանքի ընթացքում ընդհանուր առմամբ հանձնաժողովը 9 կետերի շուրջ հարցաքննել է հետևյալ անձանց. Կարո Սասունի, խմբապետ Սմբատ (Բորոյան), Վ. Քրմոյան, Վ. Տերոյան, Տ. Գավապյան, Վ. Փափազյան: Ի դեպ, այլ անձինք էլ էին հրավիրված, սակայն չէին ներկայացել:

Այդ պատճառով՝ Դատական նախաքննիչ հանձնաժողովի արձանագրությունների հետ միասին նպատակահարմար ենք գտել հրապարակել նաև ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի Դատական փաստահավաք հանձ-

3 Տե՛ս ՀՅԴ Կազմակերպական կանոններ: Հաստատուած Թ. Ընդհանուր ժողովին կողմէ, Եր., 1919:

Ե (ՃԵ) քարտ, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013
ՎԻՄ համահայկական հանդես

նախմբին ուղղված՝ Կ. Սասունու, խմբապետ Սմբատի, Վ. Տերոյանի, Վ. Քրմոյանի, Տ. Գավալայանի նամակները և ցուցմունքները՝ միջանձային հարաբերությունների, կուսակցական մարմինների գործունեության, «մեկ հայ մեկ ոսկի» խնդրի և Մշո դեպքերի վերաբերյալ:

Ընդհանրապես, պետք է փաստել, որ ՀՅԴ դատական մարմինների (տեղականից մինչև կենտրոնական) գործունեությունն առայժմ հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել, ուստի դրանց վերաբերյալ պահպանված տեղեկությունները կցկտուր են և հատուկենտ: Առավել ևս, որ այդ մարմինների նիստերի արձանագրություններն էլ խիստ հազվադեպ են հրապարակվել: Մինչդեռ այս թեմայի համակողմանի հետազոտությունը կարևոր նշանակություն կունենա մի շարք նկատառումներով:

Առաջին, հենց ՀՅԴ պատմության ամբողջական ներկայացման և ընկալման տեսանկյունից, որովհետև դատական մարմինները քննել են հասարակությանը ոչ միշտ տեսանելի հարցեր ու վեճեր, **երկրորդ**, ՀՅԴ դատական մարմինների գործունեությունը գիտականորեն չուսումնասիրված լինելու պատճառով, ինչն անգամ մեր օրերում խորհրդավոր մեկնաբանությունների, իսկ հաճախ էլ անհարկի շահարկումների տեղիք է տալիս, **երրորդ**, թեմայի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն կունենա ՀՅԴ ներկուսակցական «խոհանոցի», նրա անդամների ու կառույցների գործելակերպի վերհանման, դրանց ներսում իրականացված դաստիարակչական աշխատանքները բացահայտելու համար, որոնք, առանց չափազանցության, կարելի է համարել ուսանելի օրինակներ:

Պատճառն ակնհայտ է. չնայած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին բաժին ընկած՝ 1914-1919 թվականների պատմաշրջանի բարդագույն հարցերի քննությանը, կուսակցությունն իր մեջ ուժ գտավ բացահայտելու այդ տարիներին իր առանձին անդամների ու մարմինների ցուցաբերած թերացումներն ու սայթաքումները: Դատական ատյանների առջև կանգնեցին մարդիկ, ովքեր անցել էին Եղեռնի ու պատերազմի բովով, կորցրել էին իրենց հարազատներին ու ընկերներին: Նրանցից շատերը հետագա սերունդների հիշողության մեջ են մնացել որպես իսկական հերոսներ ու նվիրյալներ: Բայց չնայած դրան՝ ՀՅ Դաշնակցությունը մնաց իր կազմակերպական կանոնների պահանջների բարձրության վրա, որոնք հիմնված էին իր յուրաքանչյուր անդամի, անգամ ղեկավար դեմքերի, Ընդհանուր ժողովի առջև անվերապահորեն հաշվետու լինելու սկզբունքի վրա:

Ուստի համոզված ենք, որ ՀՅԴ ներկուսակցական ժողովրդավարության փայլուն ավանդույթների վկայությունը հանդիսացող դատական մարմինների արձանագրությունների շարունակական հրապարակումը օգտակար և ուսանելի կլինի թե՛ ՀՅԴ պատմության համալիր ուսումնասիրության և թե՛ Հայոց պատմության մի շարք մուօ ու վիճելի էջերի բացահայտման տեսանկյունից:

Սույնով առաջին անգամ հրապարակվող վավերագրերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության ֆոնդում (Ֆ. 1457): Վավերագրերում առկա բոլոր ընդգծումները և մեծատառերով գլխագիրները բնագրինն են, որին հավատարիմ լինելու համար նույնությամբ թողնվել են անգամ որոշ սխալագիր ձևակերպումներ, նույն բառերի տարբեր գրառումներ: Անհրա-

Ժեշտության դեպքում կատարվել են ուղղագրական և կետադրական շտկումներ: Խմբագրական հավելումները տրվել են ուղղաձիգ [] փակագծերում:

Ավագ Ա. Հարությունյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՎԱՎԵՆԵՐԵՆԵՐ

**DOCUMENTAION OF AR FEDERATION'S HISTORY
OF 1918-1920**

III part. The protocols of the Juridical pre-investigative committee
elected in ARF 9th General meeting

Avag A. Harutyunyan

**ՀՅԴ 9-րդ ԸՆԴՀ.[անուր] Ժողովի ԸՆՏՐՈՒԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՔՆՆԻՉ
ՑԱՆԾՆԱԺողովի ՆԻՍՏԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՄՓՈՓՈՒՄԸ
1919 Հոկտ.[եմբեր] 3-Հոկտ.[եմբեր] 30**

ՀՅԴ 9-րդ Ընդհ.[անուր] Ժողովին ընտրուած Դատական Նախաքննիչ
Ցանձնաժողովին նիստերուն արձանագրութիւնները

Ծանօթ.– Ցանձնաժողովի անդամներ ընտրուեցան Հոկտ.[եմբերի] 3-ին հինգ
հոգի – [Հովակիմ] Բուտաղեան, Մինաս Մակարեան⁴, Գրիգոր Մերջանեան⁵, Շահան
Նաթալի⁶ և Մ. Վերածին⁷:

Ա. Նիստ
3 Հոկտեմբեր

1. Ընտրուեցաւ Ցանձնաժողովի Դիւանը – նախագահ՝ Շահան Նաթալի, քարտուղար՝ Մ. Վերածին:

4 Ազգանունն այլ արձանագրութիւններում նշվում է նաև «Մանասեան» ձևով: Առավել հավանական է «Մակարեան» ձևը:

5 Մերջանով Գրիգոր (25.03.1880, Ադրիանապոլիս–1972-ից հետո) – ազգային-ազատագրական պայքարի գործիչ: Եղել է ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր: «Նեմեսիս» արդարահատույց գործողության ղեկավարներից: Հեռանալով քաղաքական ասպարեզից՝ հաստատվել է Փարիզում: Հուշերի հեղինակ: Արձանագրութիւններում հետայսու գրված և ստորագրված է «Մերձանֆ» տարբերակով:

6 Նաթալի Շահան (1884-1883) – ազգային-հասարակական անվանի գործիչ, գրող, հրապարակախոս: ՀՅԴ անդամ (1904-1920-ականներ): Ղեկավար դերակատարություն է ունեցել «Նեմեսիս» արդարահատույց գործողության ընթացքում: ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր, եղել է Բյուրոյի անդամ: Մի շարք գրքերի հեղինակ:

7 Մինաս Վերածին (Գասապյան)–(1882-26.05.1945) – ՀՅԴ անդամ (1900): ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր Կիլիկիայից: Ակտիվորեն մասնակցել է քեմալական հորդանների դեմ կիլիկիահայության դիմադրական պայքարին: Եղել է Բոստոնի «Հայրենիք» և Ֆրեզնոյի «Ասպարեզ» թերթերի խմբագիր:

Ե (ԺԵ) քարտի, թիվ 2 (42) ասպրի-հանդես, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

2. Կարդացուեցաւ Կ. Սասունիի նամակը և Սմբատի⁸ դիմում-տետրակը Ընդհ. [անուր] Ժողովի նախագահութեան և պատգ.[ամավոր] ընկերներու:

3. Որոշուեցաւ. ա) առաջին առթիւ կանչել Սմբատը և հարցաքննել իր ստորագրած գրքոյկ-դիմումի⁹ շարք մը կէտերու շուրջ, բ) Սարգիսեանը, և գ) դիմել [ԸՅԴ] Հայաստանի և Արևելեան Բիւրօներու, որպէսզի յանձնաժողովին ներկայացնեն իրենց ձեռքի տակ ունեցած դատերը:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Բ. Նիստ
6 Հոկտեմբեր

Ժողովը գումարուելով զբաղեցաւ Կ. Սասունիի՝ խմբապետ Սմբատի դէմ ըրած ամբաստանութիւններով, և զանոնք գրի առաւ:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Գ. Նիստ
7 Հոկտեմբեր

Ընկեր Բուստաղեան հրաժարած ըլլալով, Ընդհ.[անուր] Ժողովը անոր տեղ անդամ ընտրած էր ընկ. Հայկ Խաչատուրեան, որ ներկայ եղաւ նիստին:

Բացակայ էր ընկ. Սակարեան:

1. Ժողովը զբաղեցաւ շարք մը անձեր հարցաքննելու խնդրով և նիւթերու դասատրումով:

2. Հարցաքննեց խմբապետ Սմբատը:

3. Կարդաց ընկեր Սեպուհի գրութիւնը Վահան Փափագեանի և Ալ. Խատիսեանի մասին, և որոշեց լուսաբանութիւններ տալ և առնել:

4. Կարդացուեցաւ Վ. Խորէնիի գրութիւնը, որ կը հրաւիրէր ընկ. Ստ. Աւետիքեանի պրովօքայթէօր¹⁰ լինելու հանգամանքը ճշտել – որոշուեցաւ նորից քննել հարցը:

5. Կարդացուեցաւ Թիֆլիսի Դաշն.[ակցական] Ուսանողական միութեան ընդհանուր կոչ-գրութիւնը, որով կը հրաւիրէր բոլոր դաշն.[ակցական] մարմինները, ընկերները և այլ հաստատութիւններն, որպէսզի Հայաստանի մէջ գործող դաշնակցական զեղծարարներու մասին իրեն տեղեկութիւն տրուի:

Յանձնաժողովն նկատի ունենալով, որ 9-րդ Ընդհ.[անուր] Ժողովի նախագահութիւնը արդէն կոչ է ուղղած հասարակութեան նոյն իմաստով, և աւելորդ գտաւ այդ գրութիւնով զբաղիլ առանձնապէս:

6. Պարսկաստանէն եկած էր գրութիւն մը այնտեղի դաշն.[ակցական] մարմիններու միջև տեղի ունեցած պառակտման շուրջ: Ժողովը իր իրաւասութիւնէն դուրս նկատեց այդ խնդիրը և թուղթը յանձնել որոշեց [Արևելյան] Բիւրօին:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

8 Սմբատ Բորոյան (Մախլուտո, Զորավար Սմբատ) (27.08.1881, Մուշ-16.03.1956, Երևան) – ազգային-ազատագրական պայքարի անվանի գործիչ: Սասունի ապստամբության, Իրանական հեղափոխության, Դիվանի ձակատամարտի մասնակից: 1918-1920 թթ. եղել է 3-րդ բրիգադի կամավորականներից կազմված գնդի հրամանատար, մասնակցել Փետրվարյան ապստամբությանը: Մարտիկից 1947 թ. ներգաղթել է Երևան: Կյանքի վերջին տարիներին պահակություն է արել Կոմիտասի անվան այգում:

9 Սմբատի հեղինակած գրքոյկ-դիմում-տետրակը չհայտնաբերեցինք, հավանաբար այն եղել է ձեռագիր վիճակում:

10 Սադրիչ:

Դ-րդ Նիստ
9 Հոկտեմբեր

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Յանձնաժողովը նիստը գումարեց և զբաղեցաւ ընթացիկ գործերով և խորհրդակցութիւններով:

Բացակայ էին ընկ. Խաչատուրեան և Մակարեան:

Գ. Մերձանֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Ե-րդ Նիստ
11 Հոկտեմբեր

Նիստ և խորհրդակցութիւն: Բացակայ էին ընկ. Խաչատուրեան և Մանասեան [Մակարյան]: Կարդացուեցաւ Վ. Քրմոյեանի գիրը Ա. Մաքսապետեանի մասին՝ պարլամենտի ընտրութիւններուն չմասնակցելու մասին:

Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Զ-րդ Նիստ
15 Հոկտեմբեր

Կարդացուեցան շարք մը ստացուած գրութիւններ: Բացակայ էր ընկ. Խաչատուրեան:

1. Ժողովը տեղեկացաւ ընկ. Խորէնիի պատասխանը Ստ. Տէր-Աւետիքեանի խնդրի մասին: Ընդ որում, ընկ. Խորէնի կ'ըսէ, թէ ինք դրական տեղեկութիւններ չունի և միայն կը յանձնարարէ լսել ընկ. Գէորգ Խատիսեանը, իսկ ընկ. Կորիւնը [Ղազարյան] իր կողմէն կը յանձնարարէ լսել ընկ. Քոչարեանը:

2. Որոշուեցաւ հրաւիրել Քրմոյեանը և բացատրութիւններ պահանջել Ա. Մաքսապետեանի գործի մասին, այս վերջնոյն գրութիւնն ստացուելէ յետք:

3. Եզնիկ Քաջունի, իբրև Անդրանիկի բանակին կամուտր, չվճարուած ամսականներու խնդիր կ'ընէր¹¹, որոշուեցաւ բացատրութիւններ պահանջել և գործը յանձնուեցաւ ընկ. Մինաս Մակարեանի:

4. Ծաղկաձորի կոմիսարի դէմ բողոք եղած էր ընկերոջ մը կողմէ, որ Ընդհ. [անուր] Ժողովի նախագահ ածականը կը դնէ իր ստորագրութեան վերևը: Որոշուեցաւ դիմել

11 Տե՛ս «ՀՅ Դաշնակցութեան IX-րդ Ընդհ. [անուր] Ժողովի Դատական Մարմին: Ստորագրելալ՝ նախկին սպայ (բարուչիկ [ենթասպայ]) գորավար Անդրանիկի «Հարուածող գորամասի», 1918-ի ապրիլի 11-ից մինչև նոյն տարւայ օգոստոսի 21-ը եղել են գորամասի հետ վաշտապետի (I պաթալիօն [գումարտակ], II վաշտ) և պաթալիօնի քամանտիրի [իրամանատար] (I պաթալիօն) պաշտօններով և Զանգեզուրից հեռացել են միայն գորացրումի առիթով (Սմբատի [Բորոյան-Մախլուտո] հետ): Հարուածող գորամասը եղած է գոր.[ավար] Նազարբէգովի ընդհ. [անուր] Բանակի մաս, կռիւներ ունեցել ենք Աղէքսանդրապօլ-Վիսալքալաք շօսի [խճուղի] վրայ Արփաշայում, Լօռում (Զալալօղլի [Ստեփանավան], Դիլիջանում), նաև՝ դէպի Պարսկաստան, Խոյ, Զուլֆա, Նախիջևան, Գողթան, Զանգեզուր: Ամբողջ այդ շրջանի համար Անդրանիկից ես ստացել են միայն (650 ռ.) վեց հարիւր յիսուն ռուբլի արանս մեր ռոճիկների: Երևան մեր վերադարձին մեր դիմումները հանգուցեալ պ. Արամ Մանուկեանի և զինորակ. [ան] նախարարութեան մօտ մնացին անհետևանք: Խնդրում են իմանալ՝ ինչո՞վ էինք մենք մեղաւոր, որ եթէ մեր ռոճիկները չի տրուեցին կառավարութեան կողմից, չի տրուեցին նաև այն մի քանի հարիւր հազար ռուբլուց, որը «Ապահովութեան խորհուրդը» պ. Կ. Սասունիի միջոցաւ ուղարկել էր գօր. Անդրանիկի յանձնելու համար և մնում էր Հայ.[աստանի] Կառավարութեան մօտ: Մինչև օրս էլ ես չեմ ստացել այն վերաբերմունքը, որի հետևանքով եթէ ծանօթ չէ դէ՛ռ Դատակ.[ան] Մարմնիդ՝ ես կը յայտնեմ, որ տասնեակներ մեր գորամասի զինւորներից օրերով խորթ զաւակների նման թափառելուց յետոյ Երևանում փողոցներում և հիւանդանոցներում սոված մեռան: Խնդրում են քննել, ճշտել պատասխանատուները և տալ լրիւ մեր իրաւունքը: 27 հոկտ.[եմբեր] 1919: Յարգանք՝ Եզնիկ Քաջունի»: ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 152, թթ. 3-4:

Ե (ԺԵ) քարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013
ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԴԱՅԻՆ ԿԱՆՈՒՆԵՐԸ

Հայաստանի Կետր.[ոնական] Կոմիտեին, ներքին գործերու նախարարին և բացառութիւններ պահանջել:

5. Խաչ. Բզնունիի նկատմամբ գրաւոր խնդիր եղած էր Վրաստանի ՀՅԴ Ազգ.[ային] Խորհրդի ֆրակցիայի անունէն, որոշուեցաւ դիմել Բ. Թօփչեանին և հրաւիրել, որ լրացուցիչ տեղեկութիւններ տայ:

6. Կարդացուեցաւ և որոշուեցաւ պահել ընկ. Սեպուհի կողմէ Համազասպի [Սրվանձոյան] մասին գրած այն գրութիւնը, որով այս վերջնոյն շուրջ եղած խուլ ամբաստանութիւններ Բագուի անցքերու միջոցին անհիմն կը յայտարարէր:

7. Խմբապետ Մուրատ գրաւոր դիմում ըրած էր յանձնաժողովիս անդամներին միայն բողոքելով ընկ. Քրմոյեանի դէմ, որ իբր թէ իր մասին վարկաբեկիչ խօսքեր է ըսել: Ժողովը գտնելով, որ այս բանը անհիմն է, որոշեց տեղեկացնել խմբ. Մուրատին:

8. Հարցնել՝ Ռուբէն Դրամբեանը դաշնակցական է, թէ ոչ: Կարդացուեցաւ Վ. Քրմոյեանի գիրը, որով կ'ամբաստանէր շարք մը անհատներ զանազան գեղծումներու մէջ:

9. Որոշուեցաւ հրաւիրել ընկ. Քրմոյեանը, որպէսզի Վանի կոմիտէի և Արևմտահայ Գործադիր Մարմնի անդամներու մասին գրաւոր մանրամասներ տայ:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Է-րդ Նիստ
16 Հոկտեմբեր

Բագու մեկնած ընկ. Խաչատուրեանի տեղ՝ [ՀՅԴ 9-րդ] Ընդհ.[անուր] Ժողովը իբր անդամ նշանակեց ընկ. Հ. Տէրտէրեանը, որ նիստին ներկայ եղաւ:

1. Հարցաքննուեցաւ ընկ. Վարագդատ Տէրոյեան:

2. Կարդացուեցաւ Արևելեան Բիւրօի հերթապահ [անդամ] ընկ. Գ. Ղազարեանի N. 210 նամակը¹², որով ան յանուն Բիւրօի նպատակայարմար կը համարէ մեղադրական ձեռնարկներու ցանկ, փոխան անձերի ու կամաւորական Ա., Բ., Գ. գնդերու հաշիւները, 2. 1917 թ. ռուս.[ական] յեղափոխութեան ատեն ձեռք բերած ռազմամթերքի հաշիւ, 3. Հակակարգապահական.– Արևմտահայ Գործ.[ադիր] Մարմին, 4. Պատ.[ասխանատու] Կետր.[ոնական] Կոմիտէներ – Բագու, Էրզրում և այլն, 5. Ահաբեկումներ.– Հ. Առաքելեան, տիկ. Ռաֆայէլեան: Ժողովը որոշեց փոխանցել նոր դատական մարմնին:

Մ. Վերածին, Շ. Նաթալի, Գ. Մերձանոֆ [ստորագրություններ]

12 Տե՛ս «ՀՅ Դաշնակցութեան IX-րդ Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուած քննիչ-դատական մարմնին: Ընկերներ: 1914 թ. Ընդհանուր ժողովից սկսած մինչև այսօր մեր կուսակցական կեանքում տեղի են ունեցել մի շարք երևոյթներ, որոնք պէտք է քննութեան առնուին ՀՅԴ IX Ընդհ.[անուր] Ժողովի քննիչ-դատական մարմնի կողմից և արժանաւոր լուծումն ստանան: Մի շարք ընկերների արդէն արել են և սպասում են անելի կամ պակաս ծանրակշիռ մեղադրանքներ: Արևելեան Բիւրօն նպատակայարմար է համարում ներկայացնել ձեզ ոչ թէ անձնաւորութիւնների, այլ ձեռնարկների ցանկ, որոնց քննութեան ժամանակ երևան կը գան և ամբաստանող անձինք: Ահա այդ ցանկը. 1. Կամաւորական շարժման վերաբերեալ կիսատ մնացած հաշիւները. ա. Առաջին գնդի, բ. Չորրորդ գնդի, գ. Եօթերորդ գնդի: 2. 1917 թ. ռուսական յեղափոխութեան ժամանակամիջոցում ձեռք բերուած ռազմամթերքների-գիֆոնի [ՀՅԴ գիմական ֆոնդ] գործունէութեան հաշիւները: 3. Հակակարգապահական – Արևմտահայ գործադիր մարմնի գործունէութիւնը: 4. Պատասխանատու Կ.[ներոնական] Կոմիտէներ. ա. Բագուի նահանջի պատճառները և պատասխանատուները, բ. անհատ անձանց կողմից ուղղուած մեղադրանքները մեր Բագուի ընկերներին, գ. Բագուից բերուած ապրանքների և տպարանի վիճակն ու հաշիւները, դ. յեղափոխութիւնից յետոյ կազմած Էրզրումի Կ. Կոմիտէի գործունէութիւնը, ե. Ալէքսանդրապոլի Կ. Կոմիտէի հաշիւները 1914–1918 թթ.: 5. Ահաբեկումներ. ա. Հ. Առաքելեանի [«Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելյանի սպանութեան համար ժողովրդականները մեղադրում էին ՀՅԴ-ին] սպանութիւնը, բ. տիկին Ռաֆայէլեանի սպանութիւնը Ալէքսանդրապոլում: [ՀՅԴ] Արևելեան Բիւրօի Հերթապահ անդամ Գ. Ղազարեան: N. 210, 1919 թ. 15 հոկտեմբ.[երի], Երևան»: ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 152, թթ. 1–2:

Նիստ Ը
17 Հոկտ. 1919

ՎԵՐԱԿՈՒՄԱՆ ԿՐԻՄ

Ե (ԺԵ) քաարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013

ՎԵՄ համահայկական հանդես

Բացակայ էր ընկ. Մանասեան [Մակարյան], իսկ ընկ. Հ. Տէրտէրեան քաղաքէն հեռացած էր:

1. Ծաղկաձորէ ստացուած նամակի մասին ժողով ստեղծեցաւ Ներքին գործոց նախարարի յայտարարութեանը, որ կ'ըսէ թէ նամակագիր Մ. Մնացականեան «սրիկայ» մըն է և հետևաբար պէտք չէ մեծ արժէք տալ անոր գրութեանը: Միւս կողմէ, կ'աւելցնէր ներք.ին] գործ.ոց] նախարարը, Քննիչ մարմին դրկուած է Ծաղկաձոր այս խնդրի մասին:

Հայաս.տանի] Կետր.ոնական] Կօմիտէի անդամներէն ընկ. Սարգիսեան կը յայտնէր, թէ նամակագիրը յայտնի է իր բացասական դիրքով և ամէն անցորդի նման նամակներ կուտայ, թէ Շրջ.լանային] ժողով իսկ չէ գումարուած Ծաղկաձորի մէջ, և ուստի յիշեալ Մնացականեան իրատուօք չունի այդ ձևով ստորագրելու և դիմումներ ընելու, յետոյ այս խնդրի մասին քննութիւն կատարուած է և թղթերը կը գտնուին Հայ. [աստանի] Կետր.ոնական] Կօմիտէի մօտ:

2. Ժողովն հաստատեց, որ խմբ.ապետ] Մուրադի բողոքը Քրմոյեանի մասին չեղեալ է, պարզուած ըլլալով թիրիմացութիւնը:

3. Որոշուեցաւ գրել Բիւրօին և ուզել 40 էջանոց տետրակ մը արձանագրութեան համար և 10-15 պահարան թղթածրարի համար:

4. Հարցաքննուեցաւ Կարօ Սասունիին՝ Սմբատի կողմէ եղած ամբաստանութիւններու նկատմամբ:

5. Նախորդ նիստերից մէկուն մէջ անցած որոշման համաձայն պիտի պահանջուէր բացատրութիւններ ընկ. Քրմոյեանէն՝ Ա. Մաքսապետեանի շուրջ Ընդհ. [անուր] ժողովի մէջ ըրած յայտարարութեան և այդ առթիւ գրած նամակի մասին: Արդ, ընկ. Քրմոյեան ժողովիս ներկայացաւ և տուաւ բերանացի բացատրութիւն: Որոշուեցաւ ընկ. Քրմոյեանի ըրած նոր ամբաստանութիւնները լսել յաջորդ նիստին:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Նիստ Թ
18 Հոկտեմբեր

Բացակայ էր ընկ. Տէրտէրեան: Նիստը նախատեսուած չէր:

1. Կարդացուեցաւ Տէվօեանի վերաբերեալ թղթերը:

Ա. 1915 թ. յուլիսի նահանջի մասին պատգ. [ամավոր] Ագօեանի նամակը, որով կ'ուզուի ապացուցել, թէ նահանջի գլխաւոր պատճառը, ըստ զօրաբանակի հրամանատար Զօր. [ավար] Օկանովսկիի տեղեկութեան, եղած է Տիգրան Տէվօեանցի տուած սխալ տեղեկութիւնները (երեք թրք. [ական] Զօրաբաժնի յառաջխաղացութեան պատմութիւնը):

Բ. Տիգրան Գաւասեանի նամակը, որուն մէջ. ա) կ'ըսէր, թէ Տիգրան Տէվօեանցը ներկայացած է Դուրան Բարձրաւանդակի մարմնին պաշտօնական նամակով իբրև Բիւրօի կողմէ դրկուած ներկայացուցիչ, մինչ Բիւրօն կը հերքէ այդ բանը, բ) հակառակ Դուրան Բարձրաւանդակի Կետր. [ոնական] Կօմիտէի նախագգօշուցումին, որ նամակները գրուի ծածկագիր, Տէվօեանց շարունակած է նամակներ ուղղել առանց ծածկագրի և ասոնցմէ մէկը ընկած է թուրք կառավարութեան ձեռքը:

Գ. Տիգրան Աւետիսեանի գրութիւնը, որով կը յայտնէր, թէ. ա) 1915 թ. յունիսին Ռոստոմի և Արամի կարգադրութեամբ Մանագկերտի շրջան կը դրկուի Կարօ Սասունի, Միլաս Մակարեան, Ալ. Կափանեան և Տ. Աւետիսեան, որ քննելով և Տիգրան Տէվօեանցի խնդիրը՝ զայն գտած են մեղապարտ, և այդ մասին տուած են բանաւոր զեկուցում Ռոստոմի և Վրացեանին, բ) որ Մանագկերտի նահանջի նախօրէին կամ նոյն օրն իսկ տեղին պատասխանատու ընկերներուն տեղեկութիւն չէ տուած, իսկ ինքը հեռացած է զանազան պատարակներով, գ) Թիֆլիսի մէջ բանտարկուած և մահուան վճիռ է ստացած իբրև կամաւորական բանակի լրտես՝ վրացիներու կողմէ, ապա բանտէն

փախչելով մտած է մեր կառավարության ծառայության մէջ, շարունակելով լրտեսել, կամաւորական բանակի լրտես:

Գ. Կարօ Սասունիի նամակը կ'ամբաստանէր Տէվօեանցը, որ. ա) քսան հազար փութ ցորեն հաւաքած է Պուլանրգի հայ գիւղերէն (հայկական շտաբի անունով՝ ըստ Մինաս Մակարեանէ), որոնց փող չէ տուած և ծախսած է ռուս. բանակն (ցորենի մէկ մասը գնուած է 45 կոպեկով և նոյն տեղը յանձնուած է ռուս. [սկան] գինոր. [սկան] պարենատրման մէկ ռուբլի տասը կոպեկով, դարձեալ ըստ Մինաս Մակարեանի), բ) թիւրքերէ և ուրիշներէ ոսկեդրամ հաւաքած է թալանի իմաստով, գ) վտանգաւոր մէկ քանի քիւրտ ղեկավարներ ազատ անցուցած է դէպի Տաճկաստան և անոնցմէ ստացած է փող, դ) Կ. Սասունի կը հաստատէ նահանջի պատճառը Տէվօեանցի սխալ տեղեկութիւնները լինելը, ե) կասկածներ կան, որ ան կազմակերպած է այդ նահանջը իր սեփական զեղծումները պարտկելու համար:

Ե. Նկատի առնուեցաւ Միվաէս Պետրոսեանի Ընդհ. [անուր] ժողովին մէջ ըրած այն յայտարարութիւնը և դրկած գիրը, որով ան կը տեղեկացնէր, թէ Պօլսոյ մէջ տեսեր էր Տէվօեանցի թղթակցութիւններն ուղղուած կամաւորական բանակի ներկայացուցիչներուն:

Զ. Յանձնաժողովս սոյն հիմքերու վրայ կազմեց իր եզրակացութիւնը տանելու համար Ընդհ. [անուր] ժողովին:

2. Գրուեցաւ նամակ Բիւրօին՝ խնդրելով տետրակ, թղթածրար և գնդասեղ:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Նիստ Ժ
23 Հոկտ. [եմբեր] 1919

1. Կարդացուեցաւ ընկ. Ա. Մաքսապետեանի մեղադրական նամակը Վանի 1915-ի նահանջի միջոցին ընկ. Արամի [Մանուկյան] և Արևելեան ու Հայաստանի Բիւրօներու բռնած ընթացքի դէմ: Որոշուեցաւ Դատական մարմնին յանձնելի թղթերուն մէջ դասաւորել զայն:

2. Կարդացուեցաւ Շահաստանի¹³ Կ. [ենտրոնական] Կօմիտէի նամակ-պատճէնը ուղղուած Շահ քաղաքի կօմիտէին, որով ան կը յայտնէր Յ. Ճերմակի դէմ ուրիշներու կողմէ եղած ամբաստանութիւնները, և կաւելցնէր, թէ Կ. Կօմիտէն ինքը Յ. Ճերմակի դէմ ունէ մեղադրանք չէ ստացած, ընդհակառակը Կ. Կօմիտէն ցանկալի կը գտնէ յիշեալին մեր շարքերուն մէջ գործոն դեր ստանձնելը: Որոշուեցաւ Դատական մարմնին փոխանցել այս գիրը:

3. Կարդացուեցան Շահաստանի Կ. Կօմիտէին և Յ. Միրզայեանի միջև փոխանակուած դատական թղթերը և գործը յանձնուեցաւ ընկ. Տէրտէրեանի վերջնական զեկուցում կազմելու համար:

4. Կարդացուեցան 9-րդ Ընդհ. [անուր] ժողովի հաշուեքննիչ յանձնաժողովին նօթագրութիւնը կցուած Թիֆլիսի 1918 յունուար 1-1918 յունիս 15 շրջանի Կետր. Կօմիտէի հաշուեկշիռն, և նկատելով, որ Հաշուեքննիչ Յանձնախմբի աշխատանքն արդէն խնդիրը բերած է մինչև նորընտիր Դատական Մարմնին յանձնելու շրջանին, որոշուեցաւ Բիւրօի արձանագրութիւնը և Հաշուեքննիչ Մարմնի նօթագրութիւնները նոյնութեամբ յանձնել ընտրուելիք Դատական Մարմնին:

5. Կարդացուեցաւ Բիւրօի անդամ Գ. Ղազարեանի գիրը, որով կը յայտնէր, թէ Երևանի մէջ հնարաւոր չէ եղած 40-50 էջանոց տետրակ, մեծ պահարան գտնել:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Նիստ ԺԱ
24 Հոկտեմբեր 1919

1. Կարդացուեցաւ Վրաստանի Կետր. [ոնական] կօմիտէի որոշումը Թիֆլիսի ՀՅԴ

13 Շահաստան (Ատրուշան) – Թեհրանի Կենտրոնական կոմիտեի կուսակցական անվանումը:

գործակցական «Արարատ» Միության գործակատար Լալայեանցի մասին: Ժողովմ որոշեց փոխանցել գայն Դատական Մարմնին:

2. Անուեցաւ Տիգրան Գաւասեանի վկայութիւնը «Մէկ հայ մէկ ոսկի» (Սմբատի տպագրած տետրակին մէջ¹⁴), Կարօ Սասունիի արմտիք հաւաքելու գործին (Տարօսի մէջ) և Մշոյ դէպքերու մասին:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

Նիստ ԺԲ
28 Հոկտեմբեր [1919]

Ներկայ էր ամբողջ կազմը:

1. Կարդացուեցաւ ընկ. Յովհ. Սարգիսեանի խնդիրը, որով ան կը տեղեկացնէր, թէ ներկայ տարուան օգոստոս 27-ին Թիֆլիսէն Կարս գնալու առէն, Կարսի մէջ ձերբակալուած է և 37 օր բանտ մնալէ յետոյ՝ Կարսի շրջանէն դուրս աքսորուած է:

Յիշեալ ընկ. Սարգիսեան ապա իմացեր է, թէ ինք լրտեսութեան մէջ մեղադրուելուն համար, որ բանտարկեր են և Կարսի քաղաքագլուխ ընկ. Նորհատեան¹⁵ յայտներ է իրեն, թէ Թիֆլիսի ընկերներու ցուցմունքին հետևանքով է տեղի ունեցած ձերբակալութիւնը:

Ուստի, կը խնդրէ պարզել խնդիրը և կուսակցական դատի ենթարկել մեղադրող մարմինը, վերցնելով Կարսի շրջանէն իր աքսորի կարգադրութիւնը:

Արդ, նկատի ունենալով, որ ընկ. Նորհատեան կը հաստատէ ըրած վերոգրեալ յայտարարութիւնն Թիֆլիսի Մարմնի մասին, յանձնաժողովն որոշեց փոխանցել այս դատական խնդիրն ընտրելի Դատական Մարմնին, միաժամանակ յանձնաժողովս յանձնարարելի կը գտնէ, որ Դատական Մարմինը ուշադրութեան առնէ ընկ. Նորհատեանի սոյն անթաքթ յայտարարութիւնը:

2. Յանձնաժողովն ծանօթացաւ Ներսէս Ճաղուլեանի ռուսերեն գրուած զեկուցման հետ Բագուի անցուդարձերու մասին, ուր կան շեշտուած մեղադրական կէտեր Ս. Արարատեանի դէմ մասնատրապէս:

Ժողովս որոշեց փոխանցել այս թուղթը ևս Դատական մարմնին:

3. Միրզալեանի խնդրոյն ծանօթանալով, յանձնախումբս կ'եզրակացնէ, որ Թարիզի Կետր. [ոնական] Կօմիտէն իրաւունք չունէր ոչ-դաշնակցական անհատի կախակայութեան ոչ ժամանակը երկարել, ոչ ալ դատի տակ համարել այդպիսի մէկը, սակայն ան իրաւունք ունէր, մեր կուսակցութեան կանոնագրութեան համաձայն, չընդունել մեր կուսակցութեան շարքերուն մէջ:

Իսկ միւս կողմէ՝ Միրզալեան չէր կրնար դաշնակցականի մը կանոնական իրաւունքները իրեն վերագրել, քանի չորս տարի շարունակ չէր կատարած իր անդամական պարտականութիւնները կուսակցութեան հանդէպ և դադարեր էր կուսակցական անդամ լինելէ:

Այնուամենայնիւ Յանձնաժողովս խնդիրը փակուած չի համարեր և կը փոխանցէ գայն Դատական մայրուն մարմնին:

4. Կարդացուեցան ընկ. Արիս Դահվէզեանի նամակը վեթերաններու ընտանիքներուն փող բաշխուելու մասին: Յանձնախումբս դիմեց ընկ. [Խոսրով] Պապայեանի, որ այդ բաշխումի գործին հետ կապուած է և ստացաւ անոր գրաւոր բացատրութիւնը, զոր կը կցենք բողոքագիր նամակին: Ըստ Պապայեանի, հարցը արդէն փակուած է եղեր Պօլիս, Յանձնախումբս ալ տուեալներու վրայ յենուած՝ նոյնպէս փակուած կը նկատէ զայն:

Գ. Մերձանոֆ, Մ. Վերածին, Շ. Նաթալի [ստորագրություններ]

14 Սմբատի հեղինակութեամբ կամ նշյալ վերտառութեամբ հրատարակված գրքույկ չգտանք:
15 Համագապ Նորհատյան (?-1920) - 1890-ից ՀՅԴ անդամ: ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր: Եղել է Կարսի քաղաքապետ: Գերվել, ապա կախաղան է բարձրացվել թուրքերի կողմից:

ՎԵՐԱԿՈՒՄ

2013
ապրիլ-հունիս, 2013
Գրքի, թիվ 2 (42)

համահայկական հանդես
ՎԻՄ

Նիստ ԺԳ
30 Հոկտեմբեր 1919

Նիստին ներկայ չէին Տէրտէրեան և Մակարեան:

Ժողովը զբաղեցաւ ստացուած թղթերու դասաւորումով, զանոնք Ընդհ. [անուր] ժողովին ներկայացնելէ և Դատական մնայուն մարմնին յանձնելու համար:

Յանձնաժողովս սոյն թղթերու դասաւորումէ թիւերու կարգով կ'արձանագրէ ստորև:

- N. 1a. Գիր Կարօ Սասունիէ [սմբ. [ապետ] Սմբատի դէմ իբր զեղծարար,
- N. 1b. Ընկ. Սմբատի տպուած դիմում ամբաստանագիրը Ընդհ. Ժողովին,
- N. 2. Գիր ընկ. Խորէնիի Ստ. Աւետիքեանի մասին «բրովօքսթոր»,
- N. 3. Ընդհ. [անուր] կոչ Թիֆլիսի Դաշնակց. [ական] Ուսանող. [ական] Միութեան կատարած զեղծումներու մասին,
- N. 5a. Պարսկաստանի մարմիններու պառակտման մասին գրութիւններ,
- N. 5b. Քրմոյեանի գիրը Ա. Մաքսապետեանի հակակարգապահական ընթացքի մասին,
- N. 6a. Ա. Մաքսապետեանի պահանջագիրը Քրմոյեանէ բացատր. [ուրջուններ] պահանջելու համար,
- N. 6b. Ա. Մաքսապետեանի գրութիւնն սր նոյնին դէմ գոհացում պահանջող,
- N. 7. Եզնիկ Քաջունիի նամակը Անդրանիկի կամաւորներու չվճարուած ռճիկներու մասին,
- N. 8. Մնացականեանի (Ծաղկաձոր) ամբաստանագիրը Ծաղկաձորի կօմիսարի դէմ,
- N. 9. Վրաստ. [անի] Ազգ. [ային] Խորհրդի դաշն. [ակցական] ֆրակցիայի դիւանի գիրը Խ. Բզնունիի դէմ իբր զեղծարար,
- N. 10. Սեպուհի գիրը Համագասպի [Սրվանձոյան] Բագուի մէջ ունեցած գործունէութեան մասին,
- N. 11. Խմբապետ Մուրադի բողոքագիրը Քրմոյեանի դէմ (խնդիրը փակուած է),
- N. 12. Քրմոյեանէ գիր Վանի կօմիտէի և Արևմտահայ Գործ. [ադիր] Մարմնի անդամներու դէմ հակակարգապահական, զեղծում և թալանի մասին,
- N. 13. Արևելեան Բիւրօի նամակ – ընդհ. [անուր] ամբաստանագիրը,
- N. 14. Մաքսապետեանի մեղադրական նամակը Վանի 1915ի նահանջի մասին Արամի և Արևել. [յան] Բիւրօի դէմ,
- N. 15. Շահաստանի Կետր. [ոնական] Կօմիտէի նամակի պատճէն Յ. Ճերմակի մասին,
- N. 16. Շահաստանի Կետր. [ոնական] Կօմիտէի և Յ. Միրզ[այ]եանի միջև եղած խնդիրը – 6 (վեց կտոր դատական գիր),
- N. 17. Վրաստանի Կետր. [ոնական] Կօմիտէէն ամբաստանագիր Լալայեանցի և ընկերներու դէմ իբր զեղծարար,
- N. 18. Յ. Սարգիսեանի դիմումագիրը զինքը իբր լրտես բանտարկելու խնդրի մասին,
- N. 19. Զաղէտեանէ տեղեկագիր սր ամբաստանող՝ Բագուի գործիչները և մասնաւորապէս Ս. Արարատեան,
- N. 20. Նամակ վերերաններու ընտանիքներու նպաստ բաշխելու մասին, և Խ. Պապայեանի բացատրագիրը,
- N. 21. Հաշուեքննիչ Յանձնաժողովին յանձնուած Թիֆլիսի նախկին Կետր. [ոնական] Կօմիտէի հաշուէթղթերը, փոխանցուելու համար Դատական մարմնին,
- N. 22. Ա. Բագրատեան Քալանթարեանէ ամբաստանագիր Մեծ Քարաքիլիսի խնամատարական մինիստր. [ուրջան] ներկայացուցիչ Ալ. Կափլանեանի դէմ իբր զեղծարար,
- N. 23. Կ. Պարունակեանէ դիմում–ինքնամբաստանագիր Կարսի մէջ իր կորսնցուցած 50.000 թուրքիի համար (խնամատար. [ուրջան] մինիստր. [ուրջան] պաշտօնէայից),
- N. 24. Արարատ Տէր–Գրիգորեանէ դիմում պահանջագիր բանուոր Սէրգօէ գանձելու համար 19.160 թուրքի կառավարական դրամը,

- N. 25. Զեկուցում Թիֆլիսի բանտորական և զինուոր.[ական] միութեան խորհուրդներու կազմակերպած կարմիր «Գվարդիայի» մասին (14 կտոր փաստաթղթեր),
- N. 26. Երևանի Շրջ.[անային] Ժողովէ ընտրուած Պատ.[սախանատու] Մարմնի եզրակացութիւնը Գէորգ Ալթունեանի գործի մասին և Յ. Սարգիսեանի Սարդարաբատի շրջանի մէջ կատարած քննութեան արդիւնքը, ամբողջ թղթածրարով,
- N. 27. Եգոր Տէր Մինասեանի դիմումագիրը և Վահանի [Փափագյան] գրած անձնական նամակը,
- N. 28. Յ. Մանուկեանի ամբաստանագիրը Բաթումի շրջանի կօմիտէի անդամներու դէմ իբրև հանրային դատաւիբներ Բաթումի դաշնագր.[ուրջան] միջոցին,
- N. 29. Կարապետեանի և չորս ընկերներու ամբաստանագիրը 12 կէտերէ բաղկացած Բագուի և յարակից դէպքերու հետ կապ ունեցող ընկերներու դէմ,
- N. 30. Քրնոյեանի պահանջագիրը Ս. Թորոսեանի ըրած ամբաստանութիւնները քննելու մասին,
- N. 31. Թիֆլիսի դաշնակց.[ական] Ուս.[անողական] Միութեան կողմէ հինգ (5) գրութիւն Սարիլամիշի զեղծումներու մասին,
- N. 32. Տէվօեանի խնդիրը որ հինգ թողութրով և Յանձնաժողովիս եզրակացութիւնով յանձնուած է 9-րդ Ընդհ.[անուր] Ժողովին ի գործադրութիւն,
- N. 33. Դատական հայց՝ Իջևանի շրջանային անդամներու դէմ՝ Երևանի կօմիտէի կողմէ,
- N. 34. Խումբ մը խմբապետներու դիմումը՝ իրենց եղած նիւթական գրկանքին համար¹⁶,

16 Տեն ՀՅ Դաշնակցութեան յարգոյ Դատական մարմնին Բողոք «Խնուս» գնդի Խմբապետներից և զինւորներից. «1917 թ. ազգային խորհրդի ներկայացուցիչ (զինւորական կոմիսար) Կարո Սասունու ձեռնարկութեամբ տողեր գրողիս և հանգուցեալ Խնուսցի Աբրօի դեկլարութեամբ կազմուէց «Խնուս» անունով գօրամաս մը 1200 զինւորներից բաղկացած: Կազմուած օրից մենք անցանք գնդ.[սպետ] պ. Սամարցեանի հրամանատարութեան ներքոյ: Նախքան կազմակերպուիլը՝ Կարո Սասունին մեզ յայտնեց, որ բոլոր դրամական և ընտանիքների (զինւորների) ապրեցնելու միջոցները հոգալու է ազգ.[ային] խորհուրդը: Մենք այն օրուանից հինգ ամիս շարունակ եղեր ենք յիշեալ հրամանատարութեան թեւադրանքով ռազմաճակատ և կատարեր ենք մեր պարտականութիւնները առանց թերութիւնների: Բայց վերջի ահռելի նահանջին, երբ լցում տիրեց բոլոր ճագատներում եղած ազգային գօրամասերին, մեր զինւորական պատշաճաւոր իշխանութեան թոյլատրութեամբ՝ Վաղարշապատում կազմաւորուեցինք: Կազմաւորուած ժամանակ պահանջեցինք, ըստ օրէնքին, լիզիդացիա, բայց հրամանատարութիւնը պատասխանեց հետևեալը. – Ձեր պահանջներին պարտական է ազգ.[ային] խորհուրդը բաւարարելու: Բայց ձեզ պէտք է քաջ ծանօթ լինի՝ այն կրիտիկական մօմենտներում հրապարակում ազգ. խորհուրդ գոյութիւն չունէր, ու մենք գլխներս կորցրած, գուրկ որևէ միջոցներից, մնացինք շիւարած: Այս բոլոր անց ու դարձից յետոյ՝ մենք միացանք գօր. Անդրանիկի հետ. մեր հեռանալու միջոցին մեր գօրամասում եղած սասուցիները օգտուելով յարմար առիթից՝ դիմում են Սասունի Կարօին և իրանց պահանջներին ստանում են բաւարարութիւն: Ուրեմն, խնդրում ենք յարգոյ մարմնի ուշադրութիւնը կատարուած անարդարութեան վրայ. ինչու մեր սպանուած և սուղ մնացած զինւորութիւնը չբաւարարուեց և չէ բաւարարուած մինչև օրս: Ուստի, յանուն կուսակցութեան անաչառ և ճշմարիտ գաղափարին՝ տնօրէնութեան ամենէլ մեր արդար և ճշմարիտ բողոքի պահանջները, ըստ կուսակցութեան ծրագրի որոշման, որով մենք էլ կարողանանք լռեցնել վերջնականապէս մեր զինակից ընկերներին: Սպասում ենք Ձեր կարգադրութեան և պատասխանին: Ի դիմաց խմբապետների՝ 1. Փիլոս, 2. Շապուհ, 3. Այվազ, 4. Մխիթար: 1919 թ. 23/XI: ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 152, թթ. 7-հակ.: Փաստաթղթի սկզբում, վերին ձախ անկյունում կան հետևյալ նշումները. 1. «Դատական Ատեանի չէ վերաբերում, ուղարկել Բիւրօին: Լ. Թաղէոսեան»: 2. «Յիշեալ խնդրի հետ կուսակցութիւնը ոչ մի առնչութիւն չունի և հետևաբար որևէ օգնութիւն չի կարող: [Անընթեռնելի ստորագրություն]: Այս առթիվ հիշատակենք ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամ Գ. Դազարյանի հետևյալ գրությունը. «ՀՅ Դաշնակցութեան Բիւրօ: 1919 դեկտ.[եմբերի] 2, Երևան, N. 56: ՀՅԴ Դատական Ատեանին: Ընկերներ: Կարգ մը խմբապետներու գրաւոր դիմումը Դատական Ատեանիդ, չի նկատելով դատական խնդիր, ուղարկած էք Բիւրօին: Ներկայիս կը յայտարարենք, թէ Բիւրօն և հետևաբար՝ մեր կուսակցութիւնը, ոչ մէկ առնչութիւն չունի այդ խնդիրներուն հետ և ոչ մէկ կապ Ազգ.[ային]

N. 34 a. Պապայեանի և Կարօ Սասունիի միջև տեղի ունեցած վեճը,
 N. 35. Բագուի Կ.[ենտրոնական] Կօմիտէի նախագահ Սարգսեանի գանգատը Լևոն Միքայէլեանի դէմ:

Յանձնաժողովը 9-րդ Ընդհ.[անուր] Ժողովի ընթացքին հարցաքննած է ինը կէտերու շուրջ հետևեալ անձերը.

- Կարօ Սասունի,
- Խմբապետ Սմբատ,
- Վ. Քրմօյեան,
- Վ. Տէրոյեան,
- Տ. Գաւասեան,¹⁷
- Վ. Փափազեան¹⁸:

Ուրիշներ ևս հրաւիրած են, բայց չներկայացան:

Գ. Մերձանֆ, Մ. Վերածին, Շահան Նաթալի [ստորագրություններ]

ՀՅԴ 9-րդ Ընդհ.[անուր] Ժողովի Դատական Փաստահաւաք Յանձնախումբ

Ընկեր Կարօ Սասունին նամակով սը ի մէջ այլոց կ'ամբաստանէ ընկ. Սմբատը իբրև թալանիչ և կու տայ հետևեալ ամբաստանական ցուցմունքը:

<p>Ինչով կ'ամբաստանուի Սմբատը:</p>	<p>Սմբատը կ'ամբաստանեն իբրև թալանիչ 1914-ի կամաւորական օրերէն սկսած մինչև Բէօյիւք Վէտիի դէպքը: Պարսկաստանի մէջ, Պիթլիսի մէջ, քչերն ալ Ալաշկերտի մէջ և 1919-ին Անդրանիկէն բաժնուէլէ յետք Նոր-Բայազէտի մէջ ինք անձամբ, և իր կարգադրութեամբ իր հետևողներով ըրած է տասնեակ թալաններ բազմահազար ոչխարներու, գորգերու, իւղի և այլ պաշարներու, որոնց մեծ մասը անձնապէս իւրացուցած է, իսկ մնացած մասը որ իբր թէ յատկացուցած է բանակին, ոչ մէկ տոմարով, ոչ մէկ թղթով և ոչ մէկ պաշտոնական մարմնի ներկայացուցած է: 1. Օրինակ, Նոր-Բայազէտի շրջանին մէջ իր եղբոր մօտ հաւաքեց 60.000 (վաթսուն հազար) ռուպլիի արժողութեան իւղ, ալիւր և այլն և զանոնք իւրացուցուց: 2. Ալաշկերտի թալաններէն 3.000 ոչխար բերելով Սուրմալու, մեծ մասով ծախուեցաւ և բանակի ղեկավարները և զինուորները մշտապէս դժգոհ են չգիտնալով թէ այդ գումարները ինչ եղան: 3. Նոյն ճակատէն փոխադրած գորգերը և աղուէսի մորթերը դեռ մինչև վերջերս կը մնային Գարաքիլիսէի մէջ իր ծանօթներէն Միսաք Խաչատրեանի մօտ իր անուան: (Այս թալաններու մասին լսել զինուորական սպայակոյտին, լսել Տիգրան Մանտակունին, իր զինուորներէն, և Յովհ. Քըսընչութեան Մշեցի):</p>
------------------------------------	---

Խորհուրդի կամ Արևմտահայ խորհուրդի հետ: Ուստի, ներփակ կ'ուղարկենք Ձեզի այդ գրութիւնը: Իսկ եթէ բողոք յարուցանողները ունեն ունէ պահանջ կազմակերպական ունէ անհատէ կամ մարմնէ, այդ մասին բողոքարկութիւններու բացատրութիւնները լսելէ յետոյ՝ կարելի է դարձնել դատական խնդիր: Այլապէս, Բիւրօս ունէ միջնորդութիւն չի կրնար ընել այդ ուղղութեամբ: Հերթապահ անդամ՝ Գ. Ղազարեան, Քարտուղար՝ Յ. Տէվէճեան»: ՏՆՍ ՀԱՄ, ֆ. 1457, ց. 1, գ. 152, թ. 8:

17 1-5-րդ կետերի դիմաց ընդհանուր գրված է. «N. 1-9 թղթեր կը յանձնենք Ընդհ.[անուր] ժողովին»:

18 Այս կետի դիմաց գրված է. «Միայն բերանացի»:

<p>Ուրիշ ինչ բաներով կ'ամբաստանուի յիշեալ ընկեր Սմբատն:</p>	<p>Սմբատը կ'ամբաստանեն իբր դրամի գեղծարար: 1. Քառասուն հազար (40.000) Ա. գունդէն խնայուած՝ մնացած է, և եթէ այդ գումարէն ունէ մաս հանձնուած է իր արբանեակներէն ոմանց, պապ հանձնուածը իր խմբի անդամները միշտ այդ գումարը չստացան: Այդ գումարի հաշուի մասին ունէ հաստատութիւն կամ մարմնի ունէ հաշիւ չէ տուած: 2. Իր նախագահութեամբ կազմուած Տարօն-Տուրուբերան ընկերութեան անունով անհաշիւ և անստորագիր հաւաքած է 60.000 (վաթսուհի հազար) րուպլի, որուն մէկ մասը այդ անուան բացուած գործարանին (երկաթի) յատկացուցած և մնացած մասը անթօնթօլ և անծանօթ ձևով գործածուած: 3. Պուլանըզ-Մանազկերտ մեկնած միջոցին ստացած գումարներու հաշիւը դեռ առկալս կը մնայ:</p>
<p>Ուրիշ ամբաստանութիւններ ունի՞ք¹⁹:</p>	<p>Այո՛: Պիթիլիսի մէջ, երբ կարգադրութիւն եղաւ Ա. գունդը յանձնել, Սմբատը կազմալուծեց այն մշեցի զինուորները բաշխելով: Բ) Ղարապաղի մէջ, երբ նոր վերադարձած էր և կ'ապրէր [մեկ անընթեռնելի բառ] րուպլներ, Սմբատ պատակտիչ կը հաւաքեր իր հետ բոլոր ուժերը, թողնելով միայն ամբաստանագիրները Անդրանիկի և իր տրամադրութեան տակ, եկաւ Նոր-Բայազետ և զբաղեցաւ վերոյիշեալ թալաններով, որոնց արդիւնքը կը վայելէ մինչև հիմա:</p>
<p>Կուսակցական ինչ ամբաստանութիւններ ունիք:</p>	<p>1909 թուականէն յետոյ, երբ Սմբատը դատապարտուեցաւ Մշոյ շրջանային ժողովի կողմէն և Կոտոյի Հաջիին հետ, այդ թուականէն առդին Սմբատ բռնած է <u>հակադաշնակցական ընթացք՝ միանալով մեր հակառակորդ կուսակցութիւններու հետ</u>: Այսպէս, Մշոյ մէջ միշտ գործակցել է բարեգործականներու²⁰ հետ, <u>հալածելով Զաւարեանն ու Զարիկը</u>, ինչպէս և յաջորդական գործիչները: Այս վերջերս Ալէքսանդրօպօլի մէջ, նաև Երևանի, ինչպէս և Արևմտահայ զանազան համագումարներու ընթացքին, եղած է <u>ռամկավարներու և այլ կուսակցութիւններու հետ</u>, միշտ գործելով <u>Դաշնակցութեան և անոր ղեկավարներու դէմ</u>: <p style="text-align: right;">Կարօ Սասունի [ստորագրություն]</p> <p>1919 հոկտ. [եմբեր] 6 Երևան</p> </p>

Վարագդատ Տէրոյեանի վկայութիւնը հալածուած դաշն. [ակցական] գործիչներու մասին
 16/X/1919

<p>Դաշնակցական ինչ գործիչներ գիտէք, որոնք հալածուած են Դաշնակցութեան կողմէ:</p>	<p>Պուլկարացի Գրիգորը կը հալածուի Դաշնակցութեան կողմէ: Գր. Պուլկարացին միշտ ըսած է ինձի, թէ Բիւրօս իր հետևէ լրտեսներ դրած էր:</p>
---	---

¹⁹ Այլ ձեռագրով ավելացված է. «Հարցնել և գեներալ Նազարբէկովին»:
²⁰ Նկատի ունի Հայ Բարեգործական ընդհանուր միությունը:

Ովքեր գիտէք, որոնք ամբաստանեալ դաշնակցականներ եղած ըլլան և որոնք պատասխանատու գործերու գլուխ ըլլան այժմ:	Ընդհանրացումներ են անոնք: Մամուլին և խորհրդարանին մէջ խօսուած ու գրուած են:
Դուք Բիւրօի կողմէ դատի տակ է՞ք:	Բիւրօի անդամները հոս հոն լուր կը տարածէին, թէ ես իբր թէ դատի տակ եմ եղեր: Հակառակ իմ դիմումներուս՝ ոչ մի դրական մեղադրանք չստացայ երեք ամիսէ ի վեր Բիւրօէն:
Ովքեր ըսած են Ձեզի, թէ դուք դատի տակ էք եղեր: Ըսէ՞ք անունները քօնքրեալ:	Մկրտիչ Մտոշեան, Գրիգոր Խլղաթեան – այս վերջինի մասին վստահ չեմ: Փանոս Ժամկոչեան և ուրիշներ:

Կարօ Սասունիի գործունէութեան մասին ընկ. Վարազդատ Տէրոյեանի վկայութիւնը 16/X/1919

Հարցում	Պատասխան
Ի՞նչ գիտէք Սասունիի շուրջ խօսուած գեղծումներու մասին:	Ես ոչ մի բան չգիտեմ Կարօ Սասունիի մասին:

Ընկ. Քրմօյեանի ամբաստանութիւնները ընկ. Վարազդատ Տէրոյեանի դէմ

Երևանի մէջ ի՞նչ եղած է Ձեր դերը կառավարութեան դէմ:	Իմ յարաբերութիւնը միշտ բարեկամական եղած է կառավարութեան հանդէպ:
Խորհրդարանական ընտրութիւններու միջոցին գործօն մասնակցութիւն ունեցած էք:	Ո՛չ:
Ընտրութիւններու դէմ եղած է՞ք:	Հակառակ եղած եմ: Ես իմ կարծիքն արտայայտած եմ կուսակցական փակ հասարակութիւններու մէջ:
Դուք որ հակառակ էիք խորհրդարանին, ինչեր կ'առաջարկէիք մեր երկրի վարչութեան համար:	
Ձեր հակակարգապահական ընթացքի համար ունէ հրաւէր ստացեր էիք Բիւրօէն:	Ոչ մի հրաւէր:
Արևմտահայ Գործադիր մարմնի անդամ էի՞ք:	Այո՛, նախագահ եղած եմ:
Որո՞նք են որ խտրական ոգի ունեցած են արևմտահայերու հանդէպ և ինչ փաստ ունիք այս մասին:	Նախկին խնամատար.[ուօյան] մինիստր Սահակ Թորոսեան իր պաշտօնի կոչուելուն հետ միասին, այդ նախարարութեան մէջ գտնուող հարիւրի մօտ տաճկահայեր արձակեց առանց ունէ հիմքի, ի բաց առեալ մի քանիները: Վ. Քրմօյեան [ստորագրություն]

**Հ.Յ.Դ IX-րդ Ընդհ. [անուր] Ժողովի
Դատական Նախարանիչ Յանձնախումբ
Խմբապետ Սմբատի ամբաստանությունները**

ՎԿԼԵՆԳՐԻԿ

Ե (ԺԵ) քաարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

1	<p>Երբ Գրիգոր Չալխուշեանի²¹ միջոցով և զանազան տեղերից հաւաքուեցաւ գումար մը 70-100.000 ռուպլի և յանձնուեցաւ Անդրանիկի, որպէսզի թուրքերու կամ քիւրդերու ձեռքը գտնուող հայ գերիները հատը մէկ ոսկիով գնեն:</p> <p>Այս գումարին մէկ մասը յանձնուեցաւ Կարօ Սասունիին, իսկ գումարին միւս մասը յանձնուեցաւ ուրիշ մէկի:</p> <p>Այս գումարը բաւարար կերպով չէ գործածուած, հետևաբար զեղծումներ եղած են Կարօ Սասունիի կողմէն:</p> <p>Առհասարակ, այս զեղծումներու մասին կը վկայէ բժիշկ Պօղոսեան: Զեղծումներու մասին կը վկայեն Մշոյ Կետր. [ոնական] կօմիտէի անդամներէն Տիգրան Գաւասեանը:</p> <p>Իսկ գնումները կատարած են Կարօ և Արմէն Սասունիները²²:</p> <p>Դարձեալ իբրև վկայ կը ցուցնեն Արսէն Խաչիկեան, որ կը գտնուի Նոր-Բայազետ:</p>
2	<p>Գունի և Առաքելոց վանքի դէպքերէն յետոյ ստեղծուած կացութեան բարելաման հոգ չտանելուն մէջ կ'ամբաստանուիմ Մշոյ Կետր. [ոնական] կօմիտէն և մասնաւորապէս ընկերներ Ռուբէն և Վահան Փափագեան:</p> <p>Կոտոյի Հաջիին²³ նամակը ուշադրութեան չէ առնուած Պատ. [սախասատու] մարմնի կողմէն: Այդ նամակով Կոտոյի Հաջին կը հրաւիրէր յարձակուել Մշոյ վրայ և գրաւել զայն, ցոյց տալով թուրքերու նահանջի պատրաստութիւնները:</p> <p>Այս դէպքերու մասին կենդանի վկաներ են Յովհ. Քըսընչուրեան, Յակոբ Տէր-Ջաքարեան, Քնեազ Փօթիկեան և Տիգրան, որ անձամբ ակնաստես են եղեր: Մշոյ և Սասունի անջատման խնդիրը կապ ունի վերոգրեալ դէպքերու հետ:</p>
3.- (5)	<p>Հալածուած գործիչներու նկատմամբ պիտի վկայեն և բացատրութիւններ տան մանրամասն Գրիգոր Պուլկարացի և Վարազդատ Տէրոյեան:</p> <p>Պատասխանատու գործեր ամբաստանեալ անձերու յանձնուելը դարձեալ պիտի վկայեն Գրիգոր Պուլկարացին և Վարազդատ Տէրոյեան:</p>
4.- (6)	<p>Կը հրաւիրեմ Ձեզ հարցաքննել Ռուբէնը որպէս Բիւրօի անդամ և ամբաստանող, նաև Վարազդատը որպէս Գործադիր Մարմնի նախագահ և ամբաստանեալ յիշեալ Ռուբէնի կողմէ:</p>
6.- (12)	<p>Պաքուի անկման համար ընկ. Սեպուհի նամակը ուղղուած Անդրանիկին կը ջանէ ամբողջ պատասխանատուութիւնները երևան հանելու, այդ նամակին պատճէնը կը գտնուի մօտս:</p>
7.- (13)	<p>Թիւրքահայ գինորականներու, պաշտօնեաներու և նպաստ ընկալ ժողովրդի հանդէպ կառավարութեան կողմէ խտրական վերաբերմունք ցոյց տրուելուն նկատմամբ պիտի վկայէ յիշեալ Վարազդատը:</p>

21 Չալխուշեան Գրիգոր (1861-1931) – հասարակական գործիչ, հրապարակախոս: Եղել է ՀՀ ներկայացուցիչ Դոնի շրջանում, ապա՝ ՀՀ Կարմիր խաչի կենտրոնական վարչության նախագահ: Մի շարք գրքերի հեղինակ:

22 Կարոն և Արմենը եղբայրներ էին:

23 Կոտոյի Հաջի Հակոբ (Հակոբ Գևորգի Կոտոյան) (1864-1915) – ազգային-ազատագրական պայքարի անվանի գործիչ: Առաքելոց վանքի կովի, Սասունի ապստամբության, հայ-թաթարական կռիվների մասնակից: 1915 թ. առաջարկել է հարձակվել Մշո դաշտի թուրքական պահականոցների վրա, գրավել զենքերը և ինքնապաշտպանության դիմել: Առաջարկը մերժվել է: Նա ինքն է կազմակերպել Մուշի ինքնապաշտպանությունը և անձամբ վարել Ձորի թաղի դիմադրությունը, մարտում գոհվել է:

8.- (16)	<p>Երբ ես Ղարաքիլիսէի բօլքին ժամանակաւոր պետն էի 1918 Յունուարին, Վահան Փափազեան իմ բօլքին մէկ դրամ չէ յանձնած այն գումարէն, որ յատկացուած էր բօլքին Թիֆլիզէն մինչև էս տարին: Վահան Փափազեան այն ատեն Ապահովութեան խորհրդին նախագահ էր: Այս պարագան կը հաստատեն փաստաթղթով:</p>
9.- (24)	<p>Էջմիածնայ ճամբուն վրայ հայ գաղթականներուն յատկացուած 70.000 (յօթանասուն) րուպլին կողոպտեցին Սարգիս և Այվազ երկու խնուսցի: Կառավարութեանը յաջողեցաւ ձերբակալել զանոնք Խենթի տղուն²⁴ միջոցով: Ամիս յետք, երբ այս մարդիկը բանտէն փախան և ազատ սկսան պտտիլ Երևանի հրապարակին մէջ: Յիշեալ կողոպուտին համար Այվազը սպանեց Սարգիսը և այժմ անյայտացած կը մասնակցի մուզեթիստական շարժման:</p> <p>Նոր-Բայազէտի Դալի [մեկ անընթեռնելի բառ] դէպքի և այս մասին հարցաքննել խնուսցի Շապուհ [մեկ անընթեռնելի բառ], Ալէքսանդրոպօլցի Նիկողոս Շատիար և Արշալիր գաւառացի (Նոր-Բայազէտէն): Նոյն գաւառին մէջ Ջէյնալ գիւղը կը բնակէր մանազկերտցի շէյխ Եաղուպ Մելքօն իր ժողովուրդով, թնդանօթով, և կոտորուեցան մեր կառավարութեան կողմէ:</p> <p>Ալէքսանդրոպօլը [ի] եղբայրասպան դէպքին քննութիւնը և մանրամասները կը գտնուին ներքին գործոց նախարարութեան մօտ, ինչպէս նաև Բիւրօի անդամ Գէորգ Ղազարեանի և խորհրդարանի անդամ Հմայեակ Մանուկեանի մօտ: Այս դէպքին սպանուած են Ռուբէն և Յովոտի²⁵:</p> <p>Փոխ-վրէժներու և սովորական շանթումներու մասին առանձին կը խօսիմ քննիչ յանձնաժողովի նախագահին, որովհետև չեմ ուզեր վտանգել կամ երկպառակութիւններ առաջ բերել:</p>
10.- (16)	<p>Կ'ամբաստանիմ Կարօ Սասունին իբր Մուշի առաջին գրաման ատեն քաղաքէն գիւղերուն մէջ [մեկ անընթեռնելի բառ] արնտիքներու ձրի կամ փոքր [մեկ անընթեռնելի բառ] և իբրև գնուած ապրանք գորգ տուող: Այդ բանը կատարած է ան իր եղբօր Արմէնի միջոցով, իսկ Կովկասահայաստանի Բիւրօէն Կարօ Սասունին փող կը ստանար նաև աղէտեալները իբրև թէ զգեստաւորելու կամ սնուցանելու համար: Վկաներ.- Յակոբ Տէր-Ջաքարեան և Տիգրան²⁶:</p> <p style="text-align: right;">Մնբատ [ստորագրութիւն]</p>

24 Տեր-Պողոսյան Արսեն Սամսոնի (19.05.1875, գ. Արագյուղ, Ապարան-1938, Բուխարեստ) – ազգային-ռազմական գործիչ: 1908–1917 թթ. արտրովել է Սիբիր: Եղել է Երևանի ռազմական ոստիկանության պետ: 1918 թ. Բաշ-Ապարանի ձակաւորարտուն աշխարհագորի հրամանատար, 1920 թ. հույն-թուրքական պատերազմի մասնակից, գնդապետ:

25 Այս պարբերութեան ձախ կողմում այլ ձեռագրով գրված է. «Ալէքսանդրոպօլի եղբայրասպան Ռուբէնին»:

26 Այս պարբերութեան ձախ կողմում այլ ձեռագրով գրված է. «Սասունի»:

**Ընկեր Կարո Սասունիի պատասխանները
Խմբապետ Սմբատի ամբաստանություններուն
17/X/1919**

ՎԱԿԵՐԱԳՐԻ

Ե (ԺԵ) քաարի, թիվ 2 (42) ասյրի-հանիս, 2013


ՎԻՄ համահայկական հանդես

Հարցում	Պատասխան
Ինչ հաշի ունիս «մէկ հայ մէկ ոսկիի» գնման հետ:	Ես միմիայն ստացեր եմ Խնուս եղած միջոցիս 40 ոսկի օսմ.[այնյան] Ռոստոմի և Մանուկի (Սասունցի) և Արմէն Սասունիի միջոցով: Այս փողը ծախսուած է իր նպատակին և ամէն մէկ ոսկիի փոխարէն 16-20 մարդ ազատուած է, իսկ այս փաստաթղթերը ստորագրուած Արմէն Սասունիէ, Սասունցի Մանուկէն և Տիգրան Գաւասեանի վկայութեամբ կը մնան Արևելեան Բիրօի դիւանատան մէջ: Իմ գործը թողելէն յետոյ, 1917 ինձ Աշոտ Իսրայէլեանի, Արմէն Սասունիի, Սասունցի Մանուկի և Տիգրան Գաւասեանի տրամադրած է նոյն նպատակին համար գումար մը, որու մասին մանրամասներ չունեմ: Մեր ճակատէն ազատուած են 6.000 հոգի առանց ուէ փողի:
Մուշի առաջին գրաման ատէն այնտեղ գացի՞ք:	Այո՛:
Արմտիքներու հաւաքման խնդրի հետ կապ ունեցնէ՞ք:	1916-ի մարտին Իկ[գ]տիբէն մէկնած եմ դէպի Մուշ Ալէքսանդր Շարաֆեանի կարգադրութեամբ, որ Հայկ.[ական] Կետր.[ոնական] Կօմիտէի լիագօր էր: Այս պարոնէն ստացած էի երեք հազար (3.000) թուրքի կանխիկ Սշոյ մէջ գաղթականութեան օգնութեան հասցնելու համար: Հետո տարած եմ Միքայէլ Տ.[եր] Գէորգեան, Միսիթար Դարմախանեան և մէկ փոխադրակառքեր իրենց ծառայողներով: Մէկ և կէս ամիսէն յետոյ ստացեր եմ երեք հազար թուրքի նոյն Ալէքս.[անդր] Շարաֆեանէն, որով ամէնը ստացած եմ 5.000 հինգ հազար թուրքի:
Այդ գումարներով ինչքան արմտիք է՞ք գնած:	Մինչև Սշոյ նահանջը 1916 Յուլիս 20-ը, հինգ ամսուայ ընթացքին գնած եմ երեք հազար թուրքի ցորէն և արմտիք փութը մէկական թուրքի մի մասը, միւս մասը փութը կէսական թուրքի: Միննոյն ժամանակ շրջանէն հաւաքած եմ երեք հազար փութ աւելի արմտիք և ցորէն, մեծ մասը բռնագրաւումներով այն մարդկանցից, որոնք թափուր մնացած գիւղերէն մեծ քանակութեամբ հաւաքած և իրացուցած էին:
Այս հաւաքուած և գնուած արմտիքներու հաշուեթղթերը ունի՞ք:	Գնուած և հաւաքուած արմտիքները (կատարուած Համօ Մակարեանի, Սասունցի Մանուկի և Արմէն Սասունիի միջոցով) բաժանած է Սշոյ շրջանի տասներկու հազար բնակչութեան, ոմանց մէկական փութ, ոմանց աւելի կամ պակաս, իսկ շատերուն չէ տրուած կարիք չունենալուն համար: Այս գործառնութեանց բոլոր հաշուեթղթերը 1916 օգոստ. վերջերը տրուած են Հայկ.[ական] Կետր.[ոնական] Կօմիտէի հաշուապահութեան և ընդունուած է հակակշիռ, լսելով այդ առթիւ եղած բողոքները: Մնացած գումարը յատկացուած է արմտիքի, փոխադրութեանց համար: Ասոնց հաշիւները տրուած են ընկերութեան նոյն թուականին: Այս հաշիւները ընդունած է Ալէքս.[անդր] Շարաֆեան ²⁷ : Կ. Սասունի [ստորագրություն]

²⁷ Ավելի մանրամասն տէն Ռուբեն Օ. Սահակյան, Արևմտյան Հայաստանի վերաշինության խնդիրը: Կարո Սասունու զեկուցագրերը Տարոնի հայության վիճակի մասին, «Վէմ», 2010, N 2, էջ 185-199:

Ընկեր Տիգրան Գալասեանի (Սշեցի) վկայութիւնը
 «մէկ հայ մէկ ոսկի» խնդրոյ մասին ցոյց տրուած ընկ. Սմբատի ամբաստանագրին մէջ

Հարցում	Պատասխան
Ինչ գիտէք «մէկ հայ մէկ ոսկի» խնդրոյ մասին, որ կ'արծարծէ ընկ. Սմբատ:	1916-1917 շրջանին մեր Սշոյ շրջանին մէջ «մէկ հայ մէկ ոսկի»ի խնդիր չէ եղած, առաջին շրջանին ազատուած հայերը ձրի են ազատուած, գործը վարած է գլխաւորաբար ընկ. Մանուկը:
1917-1918 շրջանին գնումներ եղած են:	Այդ շրջանին ազատուած են 1500-2000 հոգի: Եւ մօտաւորապէս տասը հոգիի համար տրուած է մէկ ոսկի:
Վերջի շրջանի գնումները ո՞վ կ'ըներ:	Գնումները կ'ըներ Մանուկը, բայց ինքը Մանուկը փողերը կը ստանար Կարօ Սասունիէն:
Մանուկը այդ նպատակին համար որքան փող ստացած է Կարօէն:	Մանուկը Կարօէն ստացած է քառասուն ոսկի և մօտ երկու հազար ռուպլի:
Այդ ժամանակամիջոցին և գնումներու ընթացքին ունէ գեղծումի մասին բան մը լսէր էք:	Այդ ժամանակամիջոցին և գնումներու ընթացքին ունէ գեղծումներու մասին ոչինչ չէմ լսած: Սշեցի Տիգրան Գալասեան [ստորագրություն]



**Կարօ Սասունի և Արմտիքի խնդիր
Վկայություն ընկեր Տիգրան Գալասեանի**

ՎԳԵՆՆԵՐՈՒՄ

Հարցում	Պատասխան
Մշոյ գրաման առաջին շրջանին գիւղերու մէջ պահուած արմտիքները հաւաքելու գործին մէջ ի՞նչ գիտէք Կարօ Սասունիի մասին:	Կարօ Սասունին եղած է լիազօր Հայկ. [սական] Կետր. [ոնական] Կօմիտէի և իր ներկայացուցիչներ Համօի, Մանուկի և Արմէն Սասունիի միջոցով հաւաքած է գիւղերէն արմտիք՝ ընդհանրապէս ձրի, իսկ մասամբ դէպքերու նուէրներով: Մշեցի Տիգրան Գալասեան [ստորագրություն] 23/X/1919

**Մշոյ դէպքերը
Ընկ. Տիգրան Գալասեանի վկայություն**

Հարցում	Պատասխան
Մշոյ դէպքերուն մէջ ի՞նչ գիտես Ռուբէնի և Վահանի մեղադրական գործերու մասին:	Այս դէպքերուն մէջ մեղադրական կայ, 1. որ Մշոյ կոնիները սկսելու ատէն ըստ մեր որոշման, դաշտը և Սասունը ևս չսկսան կոնիը, 2. Կռուի ատեն բոլոր խմբապետները լքեր էին դաշտի գիւղերը իրենց բախտին:
Որո՞նք էին այդ շրջանի խմբապետները:	Այդ խմբապետներն էին. Փեթարցի Մանուկ, Արանցի Արամ, Մարտիրոս, Աւետիս Ղազար, Վահան Փափազեան, Կորին կը գտնուէին Բերդակ: Մշեցի Տիգրան Գալասեան [ստորագրություն] 23 Հոկտ. [եմբեր] 1919

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 153, թթ. 1-7: Բնագիր: Ձեռագիր:

Ե (ԺԵ) քարի, թիվ 2 (42) ասպի-հանիս, 2013
ՎԷՄ համահայկական հանդես